ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 74

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17-ը հուլիսի 2024թ.

Նիստը անցկացվել է հարցման միջոցով, որին մասնակցել են գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգում եղել են հետևյալ հարցերը.

1. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ **Լ.Գ. Բեգինյան**)

2. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2024թ. հարցման արդյունքների մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան**)

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2023-2024 ուստարվա գործունեության մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ **Ս. Աբազյան**)

4. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Ս. Գրիգորյան**)

Օրակարգի առաջին՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ.Գ. Բեգինյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 1-ում:

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ ՊԿՇՀ բաժնի վարիչ Լ. Գ. Բեգինյանի հաղորդումը «Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին» ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2024թ. հարցման արդյունքների

մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ա. Ճաղարյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 2-ում։

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի զեկույցը «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2024թ. հարցման արդյունքների մասին» ընդունել ի գիտություն։

Օրակարգի երրորդ՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի 2023-2024 ուստարվա գործունեության մասին» հարցի մասին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Սիրանուշ Աբազյանի հաղորդումը կարող եք տեսնել հավելված 3-ում։

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 74/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության 2023-2024 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար։

Օրակարգի չորրորդ՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում» հարցի վերաբերյալ նյութերը նախապատրաստել էր ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Ս. Գրիգորյանը**։

Ներկայացվել է հաստատման 20 կրթական ծրագրեր, որից 12-ը՝ առկա բակալավրի, 6-ը՝ հեռակա բակալավրի, 2-ը՝ հեռակա մագիստրատուրայի։ Ներկայացված բոլոր կրթական ծրագրերը պատրաստվել և ներկայացվել են ըստ ԵՊՀ ԻՄ-ում գործող ընթացակարգերի։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 74/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերը՝ համաձայն հավելված 4-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՊՀ ԻՄ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլանների, Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժնի կողմից կազմակերպվել է **46 պրակտիկա** (*տասնմեկ ուսումնական* - 8՝ առկա ուսուցում, 3՝ հեռակա ուսուցում, *տասներկու մանկավարժական* - 8՝ առկա ուսուցում, 4՝ հեռակա ուսուցում, *քսաներկու մասնագիտական* - 12՝ առկա ուսուցում, 10՝ հեռակա ուսուցում, *մեկ գիտամանկավարժական* – հեռակա ուսուցում)։

Ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է 15 հուշագիր և 32 պայմանագիր, որոնցից *4 պայմանագիր (*Իջևանի Սպ.Սարգսյանի անվան N1 հիմնական դպրոց, Իջևանի N4 հիմնական դպրոց, Իջևանի Մ.Մարտիրոսյանի անվան N5 հիմնական դպրոց, Բերդավանի միջնակարգ դպրոց) և *1 համագործակցության հուշագիր* («Դևելոփմենթ» հիմնադրամ) ստորագրվել է 2023-2024 ուսումնական տարվա ընթացում:

Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի և մասնագիտական ամբիոնների կողմից ՊԿՇՀ բաժին ներկայացված ծրագրերի։

Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով: Գործընթացին մասնակցել է 134 ուսանող։ Որպես կրթական գործունեության տեսակ ուսումնական պրակտիկայի ընթացքում, կրթական ծրագրի կարիքներից ելնելով, ուսանողները որոշ տեսակի աշխատանքների կատարմամբ (հանձնարարված թեմաների ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրում, համակարգում, վերլուծում, ստեղծագործական աշխատանքների կատարում) զարգացրել են իրենց կարողությունները՝ ուղղված իրենց հետագա մասնագիտական գործունեությանը։

Ուսումնական պրակտիկաները կազմակերպվել են մասնաճյուղում և մասնաճյուղից դուրս՝ ընդգրկելով տարբեր բնաշխարագրական տարածքներ և օբյեկտներ։

«Պատմություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ և հեռակա ուսուցման 3-րդ կուրսերում ուսանողներն ուսումնասիրել են ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, ծանոթացել դրանց առանձնահատկություններին։

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ, հեռակա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերում «ուսումնական պրակտիկա-1»-ի և «ուսումնական պրակտիկա-2»-ի շրջանակներում ուսանողները զարգացնել են իրենց մասնագիտական աշխարհայացքը հավաքելով տեղեկություններ ՀՀ զբոսաշրջային ռեսուրսների, դեստինացիաների և ենթակառուցվածքների վերաբերյալ։ Երթուղիների միջոցով ծանոթացել են ՀՀ զբոսաշրջային ուղղություններին, կատարել այցելություններ Իջևանի և Դիլիջանի տարածաշրջանների, Լոռու և Վայոց Ձորի հանրահայտ զբոսաշրջային վայրեր (եկեղեցիներ, թանգարաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ, տարածական օբյեկտներ)։

«Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները «ուսումնական պրակտիկա-1», «ուսումնական պրակտիկա-2» և «ուսումնական պրակտիկա-3»-ի ընթացքում ուսումնասիրել են՝

1. ապակենկարչությունը, նրա տիպերն ու տեսակները, նյութերը միմյանց միքսելու խնդրի լուծումները, ձևավորել գործնականում այն կիրառելու կարողություններ, կատարել ստեղծագործական աշխատանքներ,

2. գրաֆիկ դիզայնի համար նախատեսված Adobe Illustrator ծրագիրը (որի միջոցով ստեղծվում են վեկտորային ֆայլեր գրաֆիկական դիզայնի և տպագրության համար), ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների հիման վրա կատարել գրքի ձևավորում,

3. ստեղծել նախագծեր, կատարել գործնական չափագրումներ և համակարգչային ծրագրերի միջոցով իրականացրել դիզայներական լուծումներ:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները «ուսումնական պրակտիկա-1», «ուսումնական պրակտիկա-2» և «ուսումնական պրակտիկա-3»-ի ընթացքում կատարել են՝

1. ոչ հենքային և հանգուցավոր գործվածքների ուսումնասիրում, առաջադրանքների տեխնիկական հնարավորությունների հիման վրա կատարել ստեղծագործական աշխատանքներ,

2. մասնաճյուղի խեցեգործական արվեստանոցում՝ խեցեգործական արտադրություն:

Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել են այցելություններ «Չիբուխչյանս» արվեստի կենտրոն (ծանոթացնելու դեկորատիվ կիրառական արվեստի արտադրական գործունեության առանձնահատկություններին և կազմակերպչական գործընթացներին) և Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի Արատեսի ուսումնական բազա (ծանոթացնելու ճապոնական ռակու թրծման արվեստին):

Ուսումնական պրակտիկաներն ավարտվել են ստուգարքով, որոնց ամփոփման արդյունքում ակադեմիական պարտք է կուտակել հեռակա ուսուցման *16 ուսանող:*

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաները կազմակերպվել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրեր 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների համար, իսկ **գիտամանկավարժական պրակտիկան** «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողների համար: Ըստ կուրսերի մասնակցել է ընդհանուր **116** ուսանող: Առկա ուսուցման ուսանողների պրակտիկան կազմակերպվել է խմբային եղանակով՝ մանակավարժական պրակտիկաների համար մասնաճյուղի հետ համագործակցության պայմանագիր ունեցող դպրոցներում (Իջևանի համար 1 հիմնական դպրոց, Իջևանի համար 4 հիմնական դպրոց և Իջևանի համար 5 հիմնական դպրոց), իսկ հեռակա ուսուցման ուսանողների համար թե' խմբային (Իջևանի համար 1 հիմնական դպրոց, Բերդավանի միջնակարգ դպրոց), թե' ցրված եղանակով՝ ըստ բնակության ու աշխատանքի վայրերի ընդգրկելով Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի և Սյունիքի մարզերի տարբեր դպրոցներ (30 դպրոց): Գործընթացն իրականացնելու համար բաժնի կողմից պատրաստվել է 45 գրություն: Պրակտիկայի ընթացքում բոլոր դպրոցներն աջակցել են մասնաճյուղի ուսանողներին, ղեկավար նշանակելու, մանկավարժական կարողություններ ձևավորելու և զարգացնելու գործում:

Պրակտիկայի վայրում ուսանողների կողմից կատարված աշխատանքներն արտահայտվել են

թղթապանակներում, որոնք ընթացքում վերահսկվել են ղեկավարների կողմից և պաշտպանության ներկայացվել ստուգարքին: Մանկավարժական պրակտիկայի ստուգարքին չի ներկայացել 1 ուսանող:

Մանկավարժական և մասնագիտական պրակտիկաների ավարտին ՊԿՇՀ բաժնի կողմից կատարվել է արտաքին շահակիցների հարցում[1]՝ նպատակ ունենալով պարզել արտաքին շահակիցների կարծիքը պրակտիկա անցած ուսանողների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ[2]: Հարցմանը մասնակցել են պրակտիկայի վայրում նշանակված ղեկավարները, ովքեր ուսանողներին սովորեցրել և վերահսկել են առաջադրանքների կատարումը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողների վերաբերյալ գնահատում կատարել են դասվարները, իսկ «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողների վերաբերյալ՝ «Ռուսերեն» առարկան դասավանդող ուսուցիչները:

Աղյուսակ 1.

Թիվ	Կրթական ծրագիր	Ուսանողների թիվ	Հարցմանը մասնակցած թիվ	Մասնակցություն %
1	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 3-րդ կուրս	19	16	84%
2	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրս	22	22	100%
3	Ռուսաց լեզու և գրականություն 3-րդ կուրս	14	14	100%
4	Ռուսաց լեզու և գրականություն 4-րդ կուրս	6	6	100%
Ընդհանուր		**61**	**58**	**95%**

[1] Հաշվետվության մեջ ներկայացված են միայն երկրորդ կիսամյակի հարցումների արդյունքները, քանի որ առաջին կիսամյակի հարցման արդյունքները ներկայացվել են տնօրենության նիստում (31.01.2024):

[2] Հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման ուսանողների համար, այն անցկացվել է անանուն, գնահատումն իրականացվել է 5-բալային սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր գնահատականն է, իսկ 1-ը՝ ամենացածրը:

Գծապատկեր 1.


Մանկավարժական պրակտիկա-2
«Տարր. մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր
Գնահատեք մանկավարժական/մասնագիտական / պրակտիկայի...
հետևում է էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին
կարողանում է կազմակերպել սեփական աշխատանքը և արդյունքների...
կարողանում է արտահայտել սեփական մտքերը պարզ և հստակ
կարողանում է պրոբլեմային իրադրություններում (եթե այդպիսիք եղել...
կարողանում է իրականացնել դասավանդման առաջադրանքներ
քննարկում և մեկնաբանում է մանկավարժի գործունեությունը
կարողանում է հասկանալ դասի տիպը, կառուցվածքը և մանկավարժի...
կարողանում է կատարել գործնական-աշխատանքային առաջադրանքներ
4.1
4.1
4.1
4.1
3.9
4.1
4.1
4.2
3.8
4.0
4.1
4.0
3.9
4.0
4.1
4.0
3.5
3.6
3.7
3.8
3.9
4.0
4.1
4.2
4.3

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. ժամանակակից մեթոդներին տիրապետելը,
2. տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելը,
3. ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրվածությունը,
4. դատողություններ անելը,
5. ներքին կարգապահական կանոններին հետևելը։

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ունենալ նոր չափորոշիչների իմացություն,
2. համագործակցել ուսուցիչների և ղեկավարների հետ
3. զարգացնել դասարանը ղեկավարելու կարողություններ։

Գծապատկեր 2.

Մանկավարժական պրակտիկա-4
«Տարր. մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր
Գնահատեք մանկավարժական/մասնագիտական / պրակտիկայի կազմակերպման գործընթացը
5.0
էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին հետևելը
4.9
աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունը և մանկավարժական հմտությունները կատարելագործելու կարողությունը
4.9
սեփական արդյունքների վերաբերյալ դատողություններ անելու՝ տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություն
4.7
երեխաների հետ շփվելու, նրանց հետ փոխհարաբերություններ ստեղծելու կարողությունը
4.9
տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը
4.6
պրոբլեմային իրադրություններում լուծման եղանակներ ու միջոցներ առաջադրելու կարողությունը
4.8
սեփական մտքերը պարզ և հստակ արտահայտելու կարողությունը
4.7
աշակերտների ուշադրությունը կառավարելու կարողությունը
4.6
դասապրոցեսում ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը
4.7
գործունեությանը առչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները և խնդիրները մատչելի ներկայացնելու և բացատրելու կարողությունը
4.5
դասարանում որպես ուսուցիչ իր աշխատանքը կազմակերպելու կարողությունը
4.6
դասը պլանավորելու կարողությունը
4.9
մասնագիտական գիտելիքների տեսական իմացությունը (ազատ տիրապետում է նյութին)
4.9

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. դասը պլանավորելը, հետադարձ կապն ապահովելը, գնահատում իրականացնելը,
2. նյութի իմացությունը, ժամանակակից մեթոդների կիրառումը, սովորողների հետ անմիջական շփումը,
3. մանկավարժական էթիկայի պահպանումը և պատրաստակամությունը,
4. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. մասնակցություն ունենալ մասնագիտական սեմինարներին,
2. առավել ուսումնասիրել և կիրառել դասավանդման մեթոդները,
3. լինեն էլ ավելի ինքնավստահ և շարունակ ինքնակրթվել,
4. երեխաների հետ շփվելու, նրանց հետ փոխհարաբերություններ ստեղծելու կարողություն,
5. մանկավարժական վարպետության ձևավորում, զարգացում և կայացում:

Գծապատկեր 3.


Մանկավարժական պրակտիկա-2
«Ռուսաց լեզու գրականություն» կրթական ծրագիր
Գնահատեք մանկավարժական/մասնագիտական / պրակտիկայի...
5.0
հետևում է էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին
5.0
5.0
կարողանում է կազմակերպել սեփական աշխատանքը և արդյունքների...
5.0
կարողանում է արտահայտել սեփական մտքերը պարզ և հստակ
4.9
կարողանում է պրոբլեմային իրադրություններում (եթե այդպիսիք եղել են)...
5.0
կարողանում է համախմբել աշակերտներին, խթանել համատեղ աշխատանքը
5.0
հասկանում է աշակերտների զարգացման վարքային և մտավոր խնդիրները
5.0
կարողանում է իրականացնել դասավանդման առաջադրանքներ
5.0
5.0
քննարկում և մեկնաբանում է մանկավարժի գործունեությունը
4.9
կարողանում է հասկանալ դասի տիպը, կառուցվածքը և մանկավարժի...
5.0
կարողանում է կատարել գործնական-աշխատանքային առաջադրանքներ
5.0
5.0
4.9
4.8

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. մոտիվացիայի առկայությունը, ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրվածությունը,
2. տիրապետելը ՏՀՏ հմտություններին,
3. մեթոդների իմացությունը,
4. պարտաճանաչությունը, պատասխանատվության զգացումը, նորը սովորելու ձգտումը, գիտելիքը տեղայնացնելու կարողությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. կատարել մշտադիտարկում,
2. ձևավորել սեփական աշխատանքը կազմակերպելու, ժամանակը կառավարելու կարողություն,
3. զբաղվել ինքնակրթությամբ,
4. ունենալ շփում փորձառու մանկավարժների հետ, հմտանալ մասնագիտության մեջ:

Գծապատկեր 4.

Մանկավարժական պրակտիկա-4
«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիր
Գնահատեք մանկավարժական/մասնագիտական / պրակտիկայի կազմակերպման գործընթացը
4.8
էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին հետևելը
5.0
աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունը և մանկավարժական հմտությունները կատարելագործելու կարողությունը
5.0
սեփական արդյունքների վերաբերյալ դատողություններ անելու՝ տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություն
4.8
երեխաների հետ շփվելու, նրանց հետ փոխհարաբերություններ ստեղծելու կարողությունը
5.0
տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը
4.8
պրոբլեմային իրադրություններում լուծման եղանակներ ու միջոցներ առաջադրելու կարողությունը
4.8
սեփական մտքերը պարզ և հստակ արտահայտելու կարողությունը
5.0
աշակերտների ուշադրությունը կառավարելու կարողությունը
4.8
դասապրոցեսում ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը
4.8
գործունեությանը առչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները և խնդիրները մատչելի ներկայացնելու և բացատրելու կարողությունը
5.0
դասարանում որպես ուսուցիչ իր աշխատանքը կազմակերպելու կարողությունը
4.2
դասը պլանավորելու կարողությունը
4.8
մասնագիտական գիտելիքների տեսական իմացությունը (ազատ տիրապետեմ է նյութին)
5.0

ԵՊՀ ԻՄ պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանակվարժական առավելությունների համար դպրոցի ուսուցիչները նշել են.

1. մասնագիտական գիտելիքներ ունենալը, դասի ընթացքում ճկունություն ցուցաբերելը,
2. պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, մասնագիտական կարողություն ձեռք բերելու ձգտումը,
3. երեխաների հետ աշխատելու կարողությունը։

Պրակտիկանտների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. ունենալ նոր մեթոդների և պետական չափորոշիչների մասին տեղեկատվություն,
2. հաճախակի իրականացնել դասալսումներ։

Մասնագիտական պրակտիկաներն, ըստ ուսումնական պլանի, կազմակերպվել են բոլոր կրթական ծրագրերի առկա ուսուցման 4-րդ կուրսերի (Հոգեբանություն և Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագրերի համար նաև 3-րդ կուրսերի[3]) և հեռակա ուսուցման 5-րդ կուրսերի համար՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողների ձեռք բերված տեսական գիտելիքների գործնական կիրառմանն ու խորացմանը, ուսումնասիրվող մասնագիտության մեջ աշխատանքային միջավայրում մասնագիտական կարողությունների զարգացմանն ու գործնական հմտությունների ձևավորմանը, ինքնադրսևորմանը, իրականացվող գործընթացների ըմբռնմանը, ինչպես նաև ավարտական աշխատանքների շրջանակում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ուսանողի գործնական փորձի վրա հիմնված խնդիրների լուծմանը:

Պրակտիկանների իրականացման վայրը են հանդիսացել կրթական ծրագրերի ուղղվածությանը և ուսանողների հետագա մասնագիտական գործունեությանը համապատասխանող հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները:

Համաձայն պրակտիկայի ղեկավարների կողմից ՊԿՇՀ բաժին ներկայացված պրակտիկայի վայրերի՝ մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են հետևյալ հաստատություններում՝

- «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Իջևանի, Դիլիջանի, Բերդի երեխայի զարգացման և ընտանիքի աջակցության կենտրոներ, Տավուշի Պատրիկ Տէվէճյանի տարածաշրջանային քոլեջ, տարբեր դպրոցներ և մանկապարտեզներ («Հոգեբանություն» կրթական ծրագիր),

- ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, «Արդշինբանկ» ՓԲԸ, «ԱԿԲԱԲԱՆԿ» և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ների մասնաճյուղեր, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Տավուշի և Լոռու մարզպետարաններ, համայնքապետարաններ, Իջևանի և Դիլիջանի հաշվապահական հաշվառման գրասենյակներ, «Իջևանի գինու և կոնյակի գործարան» ՓԲԸ, տարբեր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերու-թյուններ և այլն («Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիր),

- Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ («ԳոԹուԴիլի»), «Լաստիվեր ռեզորթ» ՍՊԸ, «Ալանդ ռեզորթ» ՍՊԸ, Գետահովիտ ռեզորթ, «Ագրոտրենդ» ՓԲԸ և այլն («Զբոսաշրջություն» կրթական ծրագիր),

- Գիտական հետազաւոտութիւնների զարգացման կենտրոն, «ՅԵՍՈՖԹ» ՍՊԸ, «Էլթի Քոդինգ»

[3] Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագրի 3-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան կազմակերպվել է e-learning հարթակի միջոցով:

ՍՊԸ, «Զուրաբյանս» ՍՊԸ («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր),

- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարբեր մասնաճյուղեր («Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագիր),

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ («Դեկորատիվ-կիրառական արվեստ», «Դիզայն» կրթական ծրագիր), նաև «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի հետ համագործակցությամբ («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրեր):

Մասնագիտական պրակտիկաներն ընդհանուր ընդգրկել են Երևան քաղաքի, Տավուշի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի ընդհանուր 61 հաստատություններ: Պրակտիկային մասնակցել է **292** ուսանող: Գործընթացն իրականացնելու համար ՊԿՇՀ բաժնի կողմից պատրաստվել և հաստատություններ է ուղարկվել **93** գրություն:

Պրակտիկաներն իրականացվել են մասնագիտական ամբիոնների կողմից հաստատված ծրագրային պահանջներին համապատասխան: Մասնագիտական ամբիոնի կողմից նշանակված ղեկավարներն ուսանողների հետ աշխատանքները կազմակերպել են առկա և առցանց եղանակներով, պրակտիկայի վայրում կատարված աշխատանքները յուրաքանչյուր շաբաթ քննարկվել են ամբիոնի ղեկավարների կողմից, արձանագրվել պրակտիկայի օրագրերում կամ ներկայացվել բաց հաշվետվությամբ: Մասնագիտական պրակտիկաներն ավարտվել են ստուգարքով, որին չի ներկայացել 1 ուսանող:

Հաշվետվություններն ու օրագրերը, ըստ ժամանակացույցի, ղեկավարների կողմից ներկայացվել են ՊԿՇՀ բաժին: Օրագրերում կատարված գրառումների հիման վրա՝ ՊԿՇՀ բաժինը ուսումնասիրել է ուսանողների, ամբիոնի կողմից նշանակված ղեկավարների և պրակտիկայի վայրերում նշանակված ղեկավարների կարծիքներն ու առաջարկությունները պրակտիկայի գործընթացի բարելավման վերաբերյալ: Ընդհանուր առմամբ պրակտիկայի վայրերի ընտրության և գործընթացի կազմակերպման վերաբերյալ ուսանողներն ու ղեկավարներն արտահայտվել են դրական և պրակտիկան համարել արդյունավետ:

Որոշ կրթական ծրագրերով որպես **դիտողություն և առաջարկություններ նշվել են.**

- «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողները «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի հետ համագործակցությամբ մասնագիտական պրակտիկաների կազմակերպ-ման վերաբերյալ <u>առավելություն են համարել</u>

1. մասնագիտական գիտելիքների կիրառությունը,

2. Վիքիպեդիա էլեկտրոնային հանրագիտարանի հնարավորություններին ծանոթանալը,

3. խմբագրական հմտություններ ձեռք բերելը,

4. նյութեր հրապարակելը։

<u>Կատարված առաջարկներն են՝</u>

1. խմբագրական աշխատանքների դասընթացները կազմակերպել ավելի երկար և առկա ձևաչափով,

2. որպես ուղեցույց տրամադրել տեսանյութեր, որոնք կօգնեն ավելի հեշտ հասկանալ և լուծել տեխնիկական խնդիրները,

3. Վիքիմեդիայի հետ համագործակցությամբ մասնաճյուղին կից հիմնել հոդվածներ ստեղծելու ուսուցման խմբակ, ներգրավել հետաքրքրված ուսանողներին և աշխատակիցներին,

4. Վիքիպեդիա էլեկտրոնային հանրագիտարանում հոդվածներ գրելու աշխատանքներում ներառել առաջինից երրորդ կուրսերի ուսանողներին,

5. hy.wikipedia.org էլ հանրագիտարանում ունենալ թեմաների ընտրության ավելի լայն հնարավորություն,

6. հետազոտական աշխատանքները համագործակցության շրջանակներում ևս տեղադրել Վիքիպեդիայում՝ համապատասխանեցնելով կայքի պահանջներին,

<u>Թերություն են համարել</u>

1. աշխատանքային միջավայրում գործնական կարողություններ և հաղորդակցման փորձ չձևավորելը,
2. այն հանգամանքը, որ ցանկացած անձ, ով Վիքիմեդիայի անդամ կամ խմբագրող չէ, կարող է փոփոխության ենթարկել կամ ջնջել դրված հոդվածը։

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրս – «Հույսի կամուրջ» ՀԿ-ում պրակտիկան ավելի արդյունավետ դարձնելու համար նախքան պրակտիկան սկսելը կատարվող աշխատանք-ների վերաբերյալ ուսանողների իրազեկումը բարձրացնելու համար տեղի մասնագետների հետ իրականացնել թրեյնինգներ։

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս – պրակտիկան անցկացնել այն վայրերում, որտեղ կարելի է իրականացնել ավարտական աշխատանքի հետազոտությունը,

- Ունենալ պրակտիկայի վայրը փոխելու հնարավորություն, եթե պրակտիկայի վայրում նշանակված ղեկավարը դրսևորում է ոչ կոմպետենտ վարքագիծ։

- «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրս – պրակտիկան անցկացնել համալսարանից դուրս՝ ավարտական աշխատանքին համապատասխան վայրերում (կարի արտադրամաս, դիզայներական

կենտրոն կամ ճարտարապետական գրասենյակ):

Ընդունող **հաստատությունների ղեկավարների կողմից** դրական են գնահատվել՝

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրս - ուսանողների մասնագիտական կարգապահությունն ու բարձր պատասխանատվությունը, զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների հետ կատարվող աշխատանքները դիտարկելու կարողությունը, կենտրոնում կատարվող աշխատանքներին աջակցելը,

- «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս - տրված հանձնարարությունները կատարելու կարողությունը, կենտրոնում կատարվող աշխատանքներին աջակցելը,

- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրս - ուսանողների տեսական լավ գիտելիքները, հանձնանարված աշխատանքները կատարելու կարողությունը և բարձր պատասխանատվությունը, թեմաների մեջ արագ ընդգրկվելու ունակությունը, աշխատանքային միջավայրում հեշտությամբ ինտեգրվելու կարողությունը, թիմային աշխատանք կատարելու բարձր պատասխանատվությունը,

- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 4-րդ կուրս - ուսանողների մասնագիտական լավ պատրաստվածությունը, գիտելիքները գործնականում կիրառելու, վերլուծություն կատարելու, հաղորդակցվելու կարողությունները, կարգապահությունն ու մասնագիտական փորձառություն ձեռք բերելու պատասխանատվությունը, թիմում աշխատելու և որոշումներ կայացնելու հատկությունը:

-«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 4-րդ կուրս - մասնագիտական հմտությունները, կազմակերպչական կարողությունները, աշխատանքի կատարման ընթացքում ինքնուրույն մտածողություն դրսևորելու կարողությունը, առաջադրանքները կատարելու պատասխանատվությունը:

-«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրս - թիմային աշխատանքի որակները, տրված նյութն ուսումնասիրելու և հետազոտական բնույթի առաջադրանքներ կատարելու կարողությունն ու պատասխանատվությունը:

ՊԿՇՀ բաժնի կողմից ամփոփվել են նաև մասնագիտական պրակտիկաների վերաբերյալ արտաքին շահակիցների հարցումների արդյունքները:

Աղյուսակում ներկայացված է հարցմանն արտաքին շահակիցների մասնակցությունն ըստ կրթական ծրագրերի և կուրսերի:

Աղյուսակ 2.

Թիվ	Կրթական ծրագիր	Ուսանողների	Հարցմանը	Մասն՝%

		թիվ	մասն թիվ	
1	Հոգեբանություն 3-րդ կուրս	10	10	100%
2	Հոգեբանություն 4-րդ կուրս	12	11	91%
3	Ֆինանսներ (ըստ ոլորտի) 3-րդ կուրս	15	5	33%[4]
4	Ֆինանսներ (ըստ ոլորտի) 4-րդ կուրս	28	23	82%
5	Զբոսաշրջություն 4-րդ կուրս	14	8	57%
6	Ինֆորմատիկա և կիառական մաթեմատիկա 4-րդ կուրս	17	16	94%
Ընդհանուր		**96**	**73**	**76%**

Հարցման արդյունքները ներկայացված են գնահատման ցուցանիշներով և մասնագիտական գործունեությունն ու պրակտիկան բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկություններով։ Նշենք, որ բոլոր կրթական ծրագրերով գնահատման ցուցանիշները կազմել են 4-5 միավոր (4-ից ցածր գնահատում կատարվել է միայն «Ինֆորմատիկա և կիառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների օտար լեզվի կիրառման համար՝ 3.6 միավոր), որը փաստում է մեր ուսանողների տեսական իմացության և մասնագիտական կարողությունների մասին։

Գծապատկեր 5.

[4] «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսի արտաքին շահակիցների հարցմանը մասնակցել են ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեն։


Մասնագիտական պրակտիկա-1
«Հոգեբանություն» կրթական ծրագիր
Գնահատեք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից պրակտիկայի կազմակերպման գործընթացը
5.0
ներքին կարգապահական կանոններին հետևելը
4.6
մասնագիտական զարգացման ձգտումը
5.0
աշխատակիցների դիտողությունը ընդունելու և ճիշտ հետևություն անելու կարողությունը
4.6
ինֆորմացիոն տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ցանցի օգտագործման...
4.8
աշխատակիցների հետ շփման մեջ մտնելու կարողությունը
4.9
առաջադրանքները սահմանված ժամանակահատվածում կատարելու կարողությունը
5.0
առաջադրանքները կատարելու համար տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հավաքելու և ճիշտ...
4.7
պրակտիկայի վայրում նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու կարողությունը
5.0
գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը
4.6

Գծապատկեր 6.



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. ստեղծագործական մոտեցում,
2. նախաձեռնողականություն,
3. նոր մեթոդների իմացություն՝ կապված Հանրակրթության պետական չափորոշիչների հետ։

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ արտաքին շահակիցների կողմից առաջարկ չի կատարվել։

Գծապատկեր 7.



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. ուշադրություն դարձնել մանրունքներին,

2. ունենալ առաջադրանքների արդյունավետ կառավարման կարողություններ,

3. ունենալ քննադատական մտածողություն,

4. ունենալ շարունակական ուսուցում:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. Խրախուսել խմբային նախագծերը:

Գծապատկեր 8.



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են՝

1. նշված որակները բավական են լավ մասնագետի և կրթված շրջանավարտի համար,
2. դրսևորել նախաձեռնողականություն:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ հարցմանը ի պատասխան նշվել է՝

1. խրախուսել լավագույն պրակտիկանտներին:

Գծապատկեր 9.



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. ուշադրություն դարձնել օտար լեզուների որակավորմանը,

2. ունենալ կատարված դիտողությունները շտկելուց պատրաստակամություն:

Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է՝

1. բարձրացնել ուսանողների մոտիվացիան,

2. գործնական պարապմունքներ կազմակերպել հյուրանոցներում:

Գծապատկեր 10.



Պրակտիկան բարելավելու վերաբերյալ հարցմանն ի պատասխան նշվել է՝

1. Երկարացնել ժամանակը:

Ամփոփելով ՊԿՇՀ բաժնի կողմից արտաքին շահակիցների շրջանում պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ իրականացված հարցումների արդյունքները՝ նշենք, որ պրակտիկայի կազմակերպման գործընթացի գնահատման միջին միավորը կազմել է **4.82**, որը համեմատելի է Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ԵՊՀ ԻՄ ուսանողների բավարարվածության միավորներին (բուհի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքից՝ **4.92**, ընդունող կազմակերպության կամ ձեռնարկության աջակցությունից՝ **4.70**, կազմակերպման աշխատանքներից՝ **4.75**): Ըստ 2023-2024 ուսումնական տարվա հարցման արդյունքների կարող ենք ասել, որ պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացը ուսանողների և արտաքին շահակիցների կողմից բարձր է գնահատվել:

Գծապատկեր 11.



Գծապատկեր 12.



Նշենք, որ 2024-2025 ուսումնական տարվա մասնագիտական պրակտիկաներն, ինչպես Երևանի պետական համալսարանում, այնպես էլ մասնաճյուղում իրականացվելու են e-learning հարթակի միջոցով, որով կապահովվի ուսանողների շաբաթական հաշվետվողականության թափանցիկությունը նաև ՊԿՇՀ բաժնի համար:

ՊԿՇՀ բաժինը արտաքին շահակիցների հարցման արդյունքների վերլուծությունը կտրամադրի համապատասխան ստորաբաժանումներին՝ քննարկումներ կատարելու և որոշումներ կայացնելու համար:

Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժին

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ (2023-24 ՈՒՍՏԱՐԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22.06.2024թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր ներքին և արտաքին շահակիցների կարիքներին, նրանց բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ դրանց լուծման և իրականացման համար պլանավորելով իր հետագա գործունեությունը: Մասնաճյուղի նպատակն է իր շահակիցներին ներգրավելով տարբեր գործընթացներում՝ նրանց դարձնել այդ գործընթացների արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը:

Նման գործընթացներից են տարբեր մեխանիզմներով շահակիցների բավարարվածության տարատեսակ ուսումնասիրությունները:

Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը 2024 թվականի մայիսին իրականացրել է 2023-24 ուստարվա շրջանավարտների մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության հերթական ամենամյա ուսումնասիրությունը: Հարցման նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո: Շրջանավարտները նշել են միայն կրթական ծրագիրը, որով հնարավորություն ենք ապահովել տեսանելի խնդիրները, ինչպես նաև ձեռքբերումներն ընդգծել հասցեային:

2023-24 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցման 12 կրթական ծրագրերով տվել է **172** շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **143-ը,** այսինքն շրջանավարտների **83%-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն են.

Կրթական ծրագիր	ուսան.թիվը	մասն. թիվը	տոկոս
Դեկորատիվ կիրառական արվեստ	9	6	67%
Դիզայն	12	8	67%
Կիրառական արվեստի ֆակուլտետ	**21**	**14**	**67%**
Զբոսաշրջություն	15	11	73%
Ֆինանսներ(ըստ ոլորտի)	28	22	79%
Տնտեսագիտության ֆակուլտետ	**43**	**33**	**77%**
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	17	15	88%
Բնական գիտությունների ֆակուլտետ	**17**	**15**	**88%**
Պատմություն	14	10	71%

Հայոց լեզու և գրականություն	13	10	**77%**
Անգլերեն լեզու և գրականություն	20	18	**90%**
Ֆրանսերեն լեզու և գրականություն	4	4	**100%**
Ռուսերեն լեզու և գրականություն	6	6	**100%**
Հոգեբանություն	12	11	**92%**
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	22	22	**100%**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**91**	**81**	**89%**
Ընդամենը՝	**172**	**143**	**83%**

Մասնակցության ցուցանիշներից ակնհայտ է, որ հարցման արդյունքները կարելի է համարել արժանահավատ և դրանց հիման վրա կատարել վերլուծություններ, կատարել եզրահանգումներ, ի գիտություն ընդունել առաջարկները: Մասնավորապես, ընդհանրական արդյունքից բացի, նկատենք, որ բոլոր կրթական ծրագրերով ապահովվել է շրջանավարտների 67% և ավելի մասնակցություն:

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեն վերլուծելու շրջանավարտների բավարարվածության մակարդակը ստացած կրթությունից, դրա արդյունավետությունից և հասկանալու, թե որքանո՞վ է Մասնաճյուղում ստացած կրթությունն արդարացրել իրենց ակնկալիքները:

Հարցման արդյունքները ընդհանրացված են ըստ կրթական ծրագրերի, միջին որակական գնահատականների, ներկայացված են միջին գնահատականով կամ տոկոսով:

Նախ ներկայացնենք մի քանի քանակական արդյունքներ:



Նշենք, որ **հարցման մասնակից ուսանողների 33%-ը** (47-ը) մասնաճյուղում իր ուսումնառությունն ավարտել է գերազանց առաջադիմությամբ, այսինքն 18-20 միջին որակական գնահատականով (2022-23 ուստարում այդ թիվը եղել է՝ 31%, 39 շրջանավարտ): ՄՈԳ-ի այդ ցուցանիշի բարձր տոկոս ցուցաբերել են հումանիտար գիտությունների ֆակուլտետի մի քանի կրթական ծրագրերի շրջանավարտներ, մասնավորապես, «Հայոց լեզու և գրականություն»՝ 40% (10-ից 4-ը), «Ֆրանսերեն լեզու և գրականություն»՝ 75% (4-ից 3-ը), տնտեսագիտության ֆակուլտետի «Զբոսաշրջություն»՝ 45% (11-ից 5-ը), կիրառական արվեստի ֆակուլտետի «Դեկորատիվ-կիրառական արվեստ»՝ 83% (6-ից 5-ը):

Բավականին հետաքրքիր արդյունքներ ունենք նաև ուսումը շարունակելու քանակական տվյալների տեսանկյունից: Հարցման մասնակիցների **62%-ը** (89-ը) պատրաստվում է շարունակել ուսումը: Նման ցանկություն հայտնել են «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 13 շրջանավարտներից հարցմանը մասնակցած բոլոր 10-ը շրջանավարտները, «Պատմություն» կրթական ծրագրի 80%-ը և այլն:



Հարցման մասնակիցների **30%-ը** (42-ը) նշել է, որ արդեն աշխատում է, նրանց **50%-ն** աշխատում է մասնագիտությամբ, **17%-ը** արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում (հայտնի է, թե որտեղ է աշխատելու)։ Այստեղ կարևոր է ֆիքսել, որ որոշ կրթական ծրագրերի շրջանավարտների համար խնդիր ունենք աշխատաշուկայում համապատասխան մասնագետների պահանջարկի ցածր մակարդակի հետ կապված (եթե հաշվի առնենք, որ մեր շրջանավարտների հիմնական մասն աշխատանք փնտրում է մարզում)։ «Հայտնի է, թե որտե՞ղ եք աշխատելու» հարցին հարցմանը մասնակցած շրջանավարտների **54%-ը** (77-ը) պատասխանել է «ոչ» և այդ ցուցանիշը ընդգծված բարձր է «Դիզայն»՝ 75%, «Պատմություն»՝ 80%, «Ֆրանսերեն լեզու և գրականություն»՝ 80% կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ։ Ըստ կրթական ծրագրերի արդյունքները հետևյալն են.



Ապագա կարիերայի հետ կապված հուսադրող արդյունքներ ունենք «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի շրջանավարտների համար։ Նշենք, որ ունենք շրջանավարտներ (21-ը), որոնք մասնաճյուղն ավարտելու պահին աշխատում են, բայց ոչ մասնագիտությամբ։ Հուսանք, որ

ավարտելուց հետո նրանց համար մասնագիտական ոլորտում աշխատանք գտնելը կդառնա առաջնային խնդիր և առաջընթացի նոր ճանապարհ:

Ներկայացնենք, թե ինչպիսինն է մեր շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ստացած ուսումնառության արդյունքներից:

2023-24 ուստարվա շրջանավարտներն ուսումնառության որակի հետ կապված հարցերին իրենց տված պատասխաններով ցույց են տալիս, որ բավարարված են ստացած գիտելիքներից, ձեռք բերած մասնագիտական կարողություններից և հմտություններից և այլն:



Շրջանավարտների **60%-ը** (143-ից 84-ը) նշել է, որ ուսումնառությունը ԵՊՀ ԻՄ-ում լիովին նպաստում է տեսական գիտելիքների ձեքբերմանը, նախորդ ուստարում այդ ցուցանիշը եղել է 72% (124-ից 88-ը): Իրենց ձեռք բերած գիտելիքներից բավարարվածության ամենաբարձր արդյունքներ ունենք «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի շրջանավարտների մոտ՝ հարցմանը մասնակցած 10 շրջանավարտից 9-ը (90%) լիովին բավարարված է (նախորդ ուստարում՝ 8-ից 7-ը), նաև «Ֆրանսերեն լեզու և գրականոթյուն»՝ 75% (նախորդ ուստարում՝ 6-ից 5-ը), «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 73% (նախորդ ուստարում՝ 10-ից 9-ը), «Ֆինանսներ (ըստ ոլորտի)»՝ 73%:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Դիզայն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտները մասամբ են բավարարված ձեռք բերած տեսական գիտելիքներից (համապատասխանաբար՝ 67%, 88%, 60%):

Անդրադառնալով գործնական հմտությունների ձևավորմանը պետք է նշել, որ շրջանավարտները, հիմնականում, մասամբ են բավարարված լինում իրենց ձեռք բերած գործնական հմտություններից: Այս խնդիրը մշտապես առկա է բոլոր կրթական ծրագրերի համար: Կրթական ծրագրերի վերանայման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում մասնագիտական գործնական դասընթացների և նրանց ժամաքանակների ավելացմանը, այդ բացը փորձում են լրացնել նաև մասնագիտական պրակտիկաների միջոցով:

Հարցմանը մասնակցած 2023-24 ուստարվա շրջանավարտների **45%-ը** (143-ից 64-ը) լիովին բավարարված է ուսումնառության ընթացքում ձեռք բերած գործնական հմտություններից: Այստեղ ընդգծված բարձր բավարարվածություն են նշել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի շրջանավարտները՝ 100% (նախորդ ուստարում՝ 86%), «Զբոսաշրջություն»՝ 91% (11-ից 10-ը,

նախորդ ուստարում՝ 57%), «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 68% (նախորդ ուստարում՝ 80%): Իրենց ձեռք բերած գործնական հմտություններից հիմնականում մասամբ են բավարարված «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտները՝ 15-ից 13-ը, իսկ 1-ը՝ ուղղակի բավարարված չէ, ինչը շատ վատ արդյունք է, և բավականին խնդիրներ է բարձրաձայնում: Նման պատկեր է գրանցված «Պատմություն», «Հոգեբանություն», «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի համար, նրանց շրջանավարտների 65%-ից ավելին մասամբ է բավարարված իր ձեռք բերած գործնական հմտություններից:

Ֆակ.	Կրթական ծրագիր	լիովին		մասամբ		բավարարված չեն	
		քանակ	%	քանակ	%	քանակ	%
ԲԳՖ	ԻԿՄ	1	7%	**13**	**87%**	1	7%
ԿԱՖ	ԴԿԱ	**6**	**100%**		0%		0%
	Դիզայն	4	50%	4	50%		0%
ՀԳՖ	ՀԼԳ	4	40%	6	60%		0%
	ԱԼԳ	4	22%	**12**	**67%**	2	11%
	ՖԼԳ	**3**	**75%**	1	25%		0%
	ՌԼԳ	**3**	**60%**	2	40%		0%
	Պատմ.	1	10%	**8**	**80%**	1	10%
	Հոգեբ.	2	18%	**8**	**73%**	1	9%
	ՏՄՄ	**15**	**68%**	7	32%		0%
ՏԳՖ	Զբոս.	**10**	**91%**	1	9%	0	0%
	Ֆինանս.	11	50%	8	36%	**3**	**14%**
ԵՊՀ ԻՄ		**64**	**45%**	**70**	**49%**	**8**	**6%**

Հարցմանը մասնակցած շրջանավարտների **63%-ը** (143-ից 89-ը, նախորդ ուստարում՝ 62%) լիովին բավարարված է ձեռք բերած մասնագիտական կարողություններից: Այստեղ բավականին բարձր արդյունքներ ունենք «Զբոսաշրջություն»՝ 100%, «Հայոց լեզու և գրականություն»՝ 90%, «Դեկորատիվ-կիրառական արվեստ»՝ 83% և «Ռուսաց լեզու և գրականություն»՝ 83% կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ, իսկ բավարարվածության ցածր արդյունքներ ունենք «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»՝ 20%, «Հոգեբանություն»՝ 18% կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ:

Ուսումնառության արդյունքներում օտար լեզվի հետ կապված խնդիրը մշտապես ուղեկցող է և թվում է անլուծելի խնդիր է: Ուսանողները բավարարված չեն օտար լեզվի իմացության ապահովման մակարդակից: Հարցմանը մասնակցած այս ուսումնական տարվա շրջանավարտների 55%-ը մասամբ է բավարարված օտար լեզվի իմացության ապահովումից, իսկ 16%-ը՝ ուղղակի բավարարված չէ: Այս արդյունքը միջինով կարելի է դիտարկել բոլոր կրթական ծրագրերի համար (բացի «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի):

Հրավիրում ենք համապատասխան կրթական ծրագրերի ղեկավարների, ամբիոնների վարիչների և դասախոսական կազմի ուշադրությունն այս արդյունքների վրա և ակնկալում ենք, որ նրանք անհրաժեշտ քայլեր կձեռնարկեն իրենց ուսանողների մոտ գործնական հմտությունների և մասնագիտական կարողությունների բարելավման, օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Խորհուրդ ենք տալիս ուսանողների հետ կազմակերպել հանդիպում-քննարկումներ ուսումնառության որակի հետ կապված նրանց խնդիրները, անբավարարվածության պատճառները պարզաբանելու, նրանցից առաջարկներ լսելու և բարելավման լուծումներ գտնելու համար:

Այժմ դիտարկենք շրջանավարտների կարծիքները մասնաճյուղում մատուցվող դասընթացների, իրականացվող պրակտիկաների օգտակարության, գործող գնահատման համակարգի օբյեկտիվության վերաբերյալ:





Այս արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտների **66%-ը** (143-ից 95-ը) **մատուցվող դասընթացների օգտակարությունը** և **61%-ը** (143-ից 87-ը) **իրականացված պրակտիկաների**

<u>օգտակարությունը</u> գնահատել է **«լավ»,** ընդորում նախորդ ուստարում այդ արդյունքները համապատասխանաբար եղել են 63% և 65%:

Այստեղ մատուցվող դասընթացների օգտակարությունից բավարարվածության բավականին բարձր գնահատականներ են տվել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» (100%), «Ֆինանսներ» (86%), «Հայոց լեզու և գրականություն» (80%), «Պատմություն» (80%), «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (73%) կրթական ծրագրերի շրջանավարտները: Պետք է ցավով նշել, որ օրինակ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտների միայն 27%-ն է «լավ» գնահատական տվել մատուցվող դասընթացների օգտակարությանը, իսկ «Դիզայն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Հոգեբանություն» և «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի արդյունքները ընդամենը 45%-ից 60% միջակայքում են:

Պրակտիկաների օգտակարության հետ կապված ունենք այլ պատկեր: Այստեղ «լավ» գնահատական են տվել «Ռուսաց լեզու և գրականություն» (100%), «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (95%), «Ֆինանսներ» (81%), «Զբոսաշրջություն» (82%) կրթական ծրագրերի շրջանավարտները:

Իսկ ահա պրակտիկաների օգտակարությունից բավարարված չեն «Պատմություն» (լավ գնահատական տվել է մասնակիցների միայն 10%-ը), «Անգլերեն լեզու և գրականություն» (լավ գնահատական տվել է մասնակիցների 28%-ը) և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» (լավ գնահատական տվել է մասնակիցների 25%-ը) կրթական ծրագրերի շրջանավարտները: Նշենք, որ ավարտական կուրսում իրականացված պրակտիկայից ուսանողների բավարարվածության ուսումնասիրություններ ՄԿՈԱ բաժինն առանձին իրականացրել է, որի շրջանակներում նշված կրթական ծրագրերի ուսանողների բարձրաձայնած խնդիրները քննարկվել և դիտարկվել են, հետևաբար այս արդյունքները սպասելի էին:

Ֆակ.	Կրթական ծրագիր	լիովին		մասամբ		բավարարված չեն	
		քանակ	%	քանակ	%	քանակ	%
ԲԳՖ	ԻԿՄ	6	40%	9	60%		0%
ԿԱՖ	ԴԿԱ	4	67%	1	17%	1	17%
	Դիզայն	5	63%	2	25%	1	13%
ՀԳՖ	ՀԼԳ	5	50%	4	40%	1	10%
	ԱԼԳ	5	28%	**9**	**50%**	**4**	**22%**
	ՖԼԳ	1	25%	**3**	**75%**		0%
	ՌԼԳ	**6**	**100%**		0%		0%
	Պատմ.	1	10%	**6**	**60%**	**3**	**30%**
	Հոգեբ.	7	64%	4	36%		0%
	ՏՄՄ	**21**	**95%**	1	5%		0%
ՏԳՖ	Զբոս.	**9**	**82%**	2	18%		0%
	Ֆինանս.	**17**	**81%**	4	19%		0%
ԵՊՀ ԻՄ		**87**	**61%**	**45**	**32%**	**10**	**7%**

Ներկայացված դիագրամներից երևում է, որ գնահատման համակարգի օբյեկտիվության և թափանցիկության վերաբերյալ հարցմանը մասնակցած շրջանավարտների մոտավորապես կեսն է

տվել «լավ» գնահատական: Այսինքն, արդյունքները հիմնականում ընկած են 40-ից 60 տոկոս միջակայքում, իսկ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Դիզայն», «»Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ այդ ցուցանիշը ցածր է 40 տոկոսից: Չնայած, որոշ կրթական ծրագրերի համար այդ արդյունքները 60%-ից բարձր են, այնուամենայնիվ, այստեղ նույնպես ունենք խնդիր և պետք է ամբիոնների հետ համագործակցությամբ քննարկել և հասկանալ գնահատման օբյեկտիվության և թափանցիկության հետ կապված խնդիրները, ձեռնարկել դրանց բարձրացմանն ուղղված նոր և արդյունավետ քայլեր:

<u>Ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից</u> և ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աշխատանքից շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականներն ըստ ֆակուլտետների հետևյալն են.





Ինչպես տեսնում ենք, ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից բավարարվածության միջին գնահատականները բոլոր ֆակուլտետների համար 4 միավորից բարձր են, բացառությամբ բնական գիտությունների ֆակուլտետի, որի համար այն **3.9** միավոր է: Նշենք, որ բնական գիտությունների ֆակուլտետի միակ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած 17 շրջանավարտներից 7-ը գնահատվել է գերազանց, 5-ը՝ լավ և 5-ը՝ բավարար, անբավարար գնահատականներ չեն եղել: Այս հարցման արդյունքներով ԻԿՄ կրթական ծրագրի հարցմանը մասնակցած 15 շրջանավարտներից 6-ը գնահատել է 3 գնահատականով և գրեթե բոլորի ՄՈԳ-ը՝ 13-17 միավոր է: Այստեղ պետք է ֆակուլտետում համապատասխան քննարկումներ կատարել, պարզել պատճառները, հասկանալ խնդիրները և հետևություններ կատարել:

Նշենք, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները ուսանողների պատրաստվածությունը և ներկայացումները գնահատել են լավ: Մասնաճյուղի համար ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից շրջանավարտների բավարարվածության միջին գնահատականը կազմել է **4.3 միավոր**:

Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարից բավարարվածությունը բոլոր կրթական ծրագրերում գնահատվել է միջինը 4.4-ից 5.0 միավորներով: 5.0 միջին գնահատական է գրանցվել

«Դեկորատիվ կիրառական արվեստ», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Ռուսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերում:

Համալսարանում առկա **ռեսուրսներից** ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Լսարանների վիճակից և կահավորանքից բավարարվածությունը համեմատաբար ցածր է Բնական գիտությունների ֆակուլտետում և Կիրառական արվեստի ֆակուլտետում: Համակարգչային սրահների մատչելիությունից բավարարվածությունը հիմնականում ցածր է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում, համացանցի մատչելիությունից՝ Հումանիտար գիտությունների, Կիրառական արվեստի և Տնտեսագիտության ֆակուլտետներում:



Գրադարանում առկա մասնագիտական գրականությունից, ընթերցասրահի սպասարկումից և էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը հիմնականում գնահատվել է միջին կամ լավ գնահատականներով:



Մասնաճյուղի ղեկավարությունից, Ֆակուլտետի ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից շրջանավարտների բավարարվածության գնահատականները բավականին բարձր են:



Ուսանողական կառույցներից և ուսանողների դիմումներին և բողոքների արձագանքման ընթացակարգից բավարարվածությունը նույնպես միջինում բարձր է, սակայն համեմատական կարգով ունի առավել ուշադրության և հետևողականության կարիք:

Հարցման մասնակից շրջանավարտների **91%-ը** նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը միջինացված արժեքով ունի հետյալ պատկերը.



Այս արդյունքները ցույց են տալիս, որ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտները բավարարված չեն իրենց ստացած կրթությունից (միջին միավորը՝ 3.9), ինչը ցավալի է, որովհետև այդ ծրագրում պարբերաբար կատարվում են փոփոխություններ, ավելացվել են մասնագիտացումներ, բացվել են մասնագիտական լաբորատորիաներ, ապահովված են համակարգչային սրահներով, աշխատատեղի հետ կապված մեծ խնդիրներ չկան, որովհետև միայն Իջևանում գործում են ծրագրավորման մի շարք ֆիրմաներ, որոնցում հիմնականում աշխատում են այդ ծրագրի շրջանավարտները, նույնիսկ ուսանողները:

Առաջարկում ենք ֆակուլտետի ղեկավարությանը և երկու ամբիոններին ուսումնասիրել այս վերլուծության շրջանակներում բարձրաձայնված բոլոր խնդիրները և մշակել դրանց լուծման ծրագրեր:

Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի **ուժեղ կողմեր** նշվել են.

- Որակյալ կրթությունը,
- Պրոֆեսորադասախոսական բարձրակարգ կազմը,
- Ֆինանսապես մատչելիությունը,
- Անհատական մոտեցումը յուրաքանչյուրին,
- Ջերմ մթնոլորտը,
- Աշխարհագրական դիրքը,
- Օբյեկտիվությունը,
- Կազմակերպվածությունը,
- Լավ մշակված կրթական ծրագրերը:

Որպես մասնաճյուղի **թույլ կողմեր** նշվել են.

- Լսարանային պայմանները
- Համացանցի հասանելիություն
- Ռեսուրսների առկայություն
- Շենքի ոչ բավարար պայմաններ
- Պրակտիկայի սակավ հնարավորություններ
- Ոչ մասնագիտական առարկաների քննություններ
- Կրթաթոշակների սակավությունը և չափը:

Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման բարելավման համար շրջանավարտները առաջարկել են.

- Գրադարանը համալրել մասնագիտական գրականությամբ,
- Վերանայել գնահատման համակարգը,
- Ավելացնել պրակտիկաների քանակը և համալրել պրակտիկաների անցկացման վայրերի ցանկը,
- Մասնագիտական դասընթացներին տրամադրել ավելի շատ ժամաքանակ,
- Ընդլայնել մասնագիտությունների ցանկը,
- Կազմակերպել «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ մագիստրոսական ուսուցում:

Որոշ շրջանավարտներ առաջարկների հետ միասին նաև շնորհակալություն են հայտնել մասնաճյուղի ղեկավարներին, դեկաններին, պրոֆեսորադասախոսական կազմին բարձր մակարդակով և մրցունակ կրթություն տալու և ջերմ ու ուսանողակենտրոն միջավայր ապահովելու համար:

Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ Ուսանողական գիտական ընկերության 2023-2024 ուստարվա գործունեության

ԵՊՀ ԻՄ ՈՒսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 14 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ 4 դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով՝ «Ինչպես գրել էսսե», «Բերդի տարածաշրջանի պատմամշակութային վայրերը», «Հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը», «Իրազեկում linux օպերացիոն համակարգի մասին», 1 գրքի քննարկում, 1 էսսեների մրցույթ, 5 ինտելեկտուալ խաղ, 1 գրական ցերեկույթ։ Ուսանողական գիտական ընկերությունը մեկնարկել է նոր ծրագիր «Բանահավաքչություն» խորագրով, որի ընթացքում ժողովվում է բանահյուսական նյութը և պահպանվում։

«Ինչպես գրել էսսե» դասընթացի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեցան ծանոթանալ ոչ միայն էսսեի ժանրային առանձնահատկություններին, այլև գործնական առաջադրանքների միջոցով ամրապնդեցին էսսեի ստեղծագործական ընթացքի կարողությունները, կարողացան կիրառել սերտած ունակությունները։

«Բերդի տարածաշրջանի պատմամշակութային վայրերը» դասընթաց-քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեցին հետևյալ հարցերին՝ զբոսաշրջության զարգացմանն ուղղված ի՞նչ քայլեր պիտի իրականացվեն, ինչպիսի՞ ավանդազրույցներ կան պատմամշակութային վայրերի, տեղանունների ստուգաբանական բովանդակությունների հետ կապված։ Կարևորվեցին տարածաշրջանի զբոսաշրջային ռեսուրսները, և քննարկվեցին տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման հեռանկարները։

«Հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը» դասընթացի շրջանակներում ուսանողներին ներկայացվեցին հետազոտական աշխատանք գրելու մեթոդաբանությունը։ Ուսանողները ծանոթացան հետազոտական աշխատանք գրելու մեջ առանցքային դրույթների, որպեսզի հնարավորինս խուսափեն խոչընդոտներից։

«Իրազեկում linux օպերացիոն համակարգի մասին» դասընացի ընթացքում խոսվեց linux-ի ստեղծման, զարգացման, առանձնահատկությունների մասին: Տեղի ունեցավ հարց-պատասխան քննարկում, ցուցադրվեցին մի քանի գործողություններ linux-ով:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի կողմից իրականացվել է նաև Ա. Շիրվանզադեի «Քաոս» վեպի քննարկումը: Ուսանողների կողմից ընդգծվեց ստեղծագործության արդիականության հարցը, զուգահեռներ տարվեցին մեր օրերի հետ:

Երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն կազմակերպել է թվով 4 «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղ, որից 3-ը տարածաշրջանի Աչաջուր, Գանձաքար և Իջևանի ավագ դպրոցներում, իսկ մեկը՝ եզրափակիչը, անց է կացվել մասնաճյուղում: Տարածաշրջանի դպրոցներում ինտելեկտուալ խաղի իրականացման նպատակներից մեկը համալսարան-դպրոց կապի ամրապնդումն է:

Ուսանողական գիտական ընկերությունը պարբերաբար հանդես է գալիս ուսանողներին գիտաժողովների, դասընթացների, կրթաթոշակների մասին իրազեկող հայտարություններով՝ նպատակ ունենալով ուսանողների շրջանում բարձրացնել տեղեկացվածության մակարդակը:

Ուսանողական գիտական ընկերությունը ՈՒԳԸ ֆակուլտետային նախագահների միջոցով ակտիվ համագործակցում է ֆակուլտետների ամբիոնների հետ տեղեկացվածության և կրթական, գիտական, մշակութային ծրագրերի իրականացման համար:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն սերտ համագործակցությունները շարունակել է ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի կազմակերպման և շահակիցների բաժնի հետ, Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ, «Ռեստարտ Իջևան» ՀԿ-ի հետ:

ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ցանկը

Բակալավրական

1. Հայոց լեզու և գրականություն (023101.00.6)(առկա)
2. Հայոց լեզու և գրականություն (023101.00.6)(հեռակա)
3. Հոգեբանություն (031301.00.6)(հեռակա)
4. Հոգեբանություն (031301.00.6)(առկա)
5. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (011301.00.6)(առկա)
6. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (011301.00.6)(հեռակա)
7. Պատմություն (022201.00.6)(հեռակա)
8. Պատմություն (022201.00.6)(առկա)
9. Անգլերեն և գրականություն (023102.00.6)(առկա)
10. Ֆրանսերեն և գրականություն (023102.00.6)(առկա)
11. Ռուսերեն և գրականություն (011401.00.6) (առկա)
12. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (061101.00.6)(առկա)
13. Դիզայն (021201.00.6) (առկա)
14. Դեկորատիվ-կիրառական արվեստ (021401.00.6) (առկա)
15. Ֆինանսներ (041201.00.6)(առկա)
16. Ֆինանսներ (041201.00.6)(հեռակա)
17. Զբոսաշրջություն (101501.00.6) (առկա)
18. Զբոսաշրջություն (101501.00.6)(հեռակա)

Մագիստրոսական

19. Գործարար վարչարարություն (կառավարում) (041301.04.7) (հեռակա)
20. Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա (011301.00.7) (հեռակա)